# ԱՍՏԾՈ ՓԱՌՔԸ ԵՎ ԵՂԻՍԵԻ ԿԱՆՉԸ
# THE GLORY OF GOD AND THE CALL OF ELISHA

**ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.**

*Գլուխ 18 – Եղիան փախչում է Հեզաբելից: Աստված երևում է նրան Քորեբ սարի վրա: Եղիսեն նրան աշակերտ է դառնում:*

- *Ազիելին թագավոր օծիր Ասորիների վրա:*
- *Հէուին էլ թագավոր օծիր Իսրաելի վրա:*
- *Եղիսեին էլ մարգար է օծիր քո տեղը:*
- *Ամեն վերստին ծնված զավակ ունի օծություն, ԲԱՅՑ քո կոչման օծությունը յուրահատուկ է:*

*Հորդանանի ջրերը բաժանուեցին, Սունամացի կնոջ որդու հարությունը, երկաթը լողալ է տալիս, Ծատացնում է որբևայրիի յուղը, Թունավոր կերակուրի հրաշքը, Եղիսէի ոսկորները կենդանություն տվեց.*

**ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. 3 Թագ. 19:19-21**

*19 Եվ այնտեղից գնաց ու գտավ Սափատի որդի Եղիսեին, և նա վար էր անում՝ տասներկու լուծ եզ իր առաջ, և ինքը տասներկուերորդի հետ էր.* ***Եւ Եղիան անցավ նորա մօտ եւ իր վերարկուն գցեց նորա վրա:***

**ԲԱՆԱԼԻ ԲԱՌ: mantle, ԹԻԿՆՈՑ, ՔՈՂ, ԾԱԾԿՈՑ, אַדֶּרֶת // ԷԴԵՐԷԹ – ՓԱՌՔ, ՃՈԽՈՒԹՅՈՒՆ x12**

> *Երբ Եղիան լսեց այն, իր* ***երեսը ծածկեց իր վերարկուով,*** *դուրս եկավ ու կանգնեց քարայրի դռանը, և ահա մի ձայն եղավ նրան ու ասաց. Ի՞նչ ունես այստեղ, Եղիա: Գ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ 19:13*

*20 Եւ Նա թողեց եզները, վազեց Եղիայի ետևից և ասաց. Թող համբուրեմ հորս ու մորս և հետո* ***<u>հետևեմ քեզ</u>.*** *Եւ նա ասեց նորան. Գնա՛ ու վերադարձի՛ր, որովհետև ես քեզ ի՞նչ եմ արել: 21 Եվ նա ետ դարձավ նրա ետեւից, մի լուծ եզ վերցրեց ու զոհեց և* ***<u>եզների գործիքներով</u>*** *եփեց նրանց միսն ու տվեց ժողովրդին, և նրանք կերան այն. և վեր կացավ ու գնաց Եղիայի ետևից և ծառայում էր նրան:*

- **Երկու սկզբունք Աստծո հանդեպ մեր նվիրվածության վերաբերյալ:**

## I. ԱՍՏԾՈՒՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՉԷ ԱՄԵՆ ԻՆՉ ԼԻՈՎԻՆ ՀԱՍԿԱՆԱԼ:
**IT IS NOT NECESSARY TO FULLY UNDERSTAND EVERYTHING IN ORDER TO FOLLOW GOD.**

*19 [Եղիսեն] Եվ այնտեղից գնաց ու գտավ Սափատի որդի Եղիսեին, և նա վար էր անում՝ տասներկու լուծ եզ իր առաջ, և ինքը* ***տասներկուերորդի հետ էր.***

***Եղիսեն իր երկրավոր կյանքում ամեն բանի հասել էր. Տուն, Բիզնես, հարստություն… ԲԱՅՑ նա նախընտրեց թողնել ամեն բան և հետեվել Եղիսեին:***

- ***Միգուցե դու էլ Եղիայի նման հոգնել ես… բայց հիշիր որ Եղիսե էս մեծացնում.***
- ***Ինչպե՞ս կբնութագրեք Աստծո հանդեպ ձեր վստահության մակարդակը: Ի՞նչը կարող է խանգարել լիովին վստահել Նրան:***

## II. ԱՍՏՎԱԾ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ Է ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՄԵՆԱՔԻՉ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐՆ ՈՒՆԵՆ ԱՅՍ ԿՅԱՆՔԻՑ:
**GOD USES THOSE WHO HAVE THE LEAST EXPECTATIONS OF THIS LIFE.**

21 Եվ նա ետ դարձավ նրա ետևից, մի լուծ եզ վերցրեց ու զոհեց և եզների գործիքներով եփեց նրանց միսն ու տվեց ժողովրդին, և նրանք կերան այն. և վեր կացավ ու գնաց Եղիայի ետևից և ծառայում էր նրան: **(Եղիսեն չասաց, դե աղոթեմ տեսնեմ Տերը ինչ է ասում):**

- **Աստծո ուղղությունները հաճախ դիտավորյալ անորոշ են. Աբրահամ գնա... Մովսես այն երկիրը, որը ես ձեզ ցույց կտամ... Պետրոս արի...**

**(ՂՈՒԿԱՍ 5) ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԱՅՐՈՂ ՀԱՎԱՏՔ.**

***Ղուկ. 5:11 - Եւ նավերը հանեցին ցամաքը, ամեն բաները թողեցին, եւ նորա ետեւից գնացին:***

*Ղուկաս 9:57-62 – Եվ մինչ նրանք գնում էին, ճանապարհին մի մարդ նրան ասաց. (1)* ***Ես քո հետևից կգամ,*** *ո՛ւր էլ որ գնաս: Հիսուսը նրան ասաց. Աղվեսները որջեր ունեն, երկնքի թռչունները՝ բույներ, բայց Մարդու Որդին տեղ չունի, որ գլուխը դնի: (2) Մեկ ուրիշի էլ ասաց.* ***Արի՛ իմ հետևից:*** *Սա ասաց. Տե՛ր, թո՛ւյլ տուր, որ նախ գնամ, իմ հորը թաղեմ: Հիսուսը նրան ասաց. Թող մեռելները իրենց մեռելներին թաղեն, իսկ դու* ***գնա՛,*** *Աստծու արքայությո՛ւնը քարոզիր: (3) Մեկ ուրիշն էլ ասաց.* ***Տե՛ր, քո հետևից կգամ,*** *միայն թե նախ թո՛ւյլ տուր ինձ, որ իմ տնեցիներին հրաժեշտ տամ: Հիսուսը նրան ասաց. Ոչ ոք, ով ձեռքը մաճի վրա է դնում ու հետ նայում, հարմար չէ Աստծու արքայության համար:* ***(Ձեռքդ դնես ավտոմեքենայի ղեկին ու վարելիս ետ նայես)***

- ***Մեր ճիշտ տեղը գտնելու համար, մենք պետք է դուրս գանք մեր հարմարավետ վիճակից (շենքից):***

    ***Մատ. 16:24 - 24 Այն ժամանակ Յիսուսը իր աշակերտներին ասեց. Եթէ մէկը կամենում է իմ ետեւից գալ, թող իր անձն ուրանա եւ իր խաչն առնէ, եւ իմ ետեւից գա: (ավելին քան Եղիսեն էր կարծում):***

**ՀԱՋՈՐԴ ՔԱՅԼԸ:**

- ***Ի՞նչ է Աստված Ձեզ ասում անել, որ Դուք պետք է անմիջապես հնազանդվեք:***

    ***Մատ. 4:20 – Եւ նորանք շուտով իրանց ուռկանները թողած նորա ետեւից գնացին:***